Թվային, գովազդային վահանակի ձեռքբերման հիմնավորում

Թվային գովազդային վահանակի տեղադրումը միտված է բարձրացնել համայնքում հաղորդակցության արդյունավետությունը, աջակցել տեղական տնտեսության զարգացմանը, խթանել բնակիչների և հյուրերի իրազեկվածությունը, ինչպես նաև նպաստել համայնքի ժամանակակից ու գրավիչ կերպարի ձևավորմանը:

Ներկայումս համայնքում տեղեկատվության տարածումը կատարվում է հիմնականում ավանդական մեթոդներով՝ թղթային հայտարարություններով, բանավոր տեղեկացմամբ կամ սոց. մեդիայի սահմանափակ օգտագործմամբ, ինչն ունի մի շարք սահմանափակումներ.

- Տեղեկատվության սահմանափակ հասանելիություն,
- Չկա միասնական, տեսանելի հարթակ համայնքային լուրերի/իրադարձությունների տարածման համար,
- Դժվար է արտակարգ իրավիճակներում արագ իրազեկումը,
- Բիզնեսների գովազդման և տեղեկատվության տարածման սահմանափակ հնարավորություններ:

Մենք առաջարկում ենք հետևյալ լուծումը. տեղադրել թվային, LED տիպի գովազդային վահանակ համայնքի մարդաշատ վայրում (օրինակ՝ համայնքապետարանի, մշակույթի տան, կամ կենտրոնական հրապարակում), որը կծառայի՝

1. Հանրային իրազեկման,
2. Տեղեկատվության փոխանցման,
3. Տեղական բիզնեսների գովազդման,
4. Մշակութային միջոցառումների և կրթական ծրագրերի տարածման,
5. Արտակարգ իրավիճակների ազդարարման նպատակներով:

Կունենանք հետևյալ ազդեցությունը

1. Տեղեկատվության հասանելիություն բոլորին

Բնակիչները ցանկացած պահի կտեսնեն համայնքային նորությունները, հայտարարությունները, հանրային իրազեկման բովանդակությունը՝ անկախ ինտերնետի կամ սոցիալական ցանցերի հասանելիությունից:

2. Տեղական բիզնեսների աջակցություն
Վահանակը կտրամադրի վճարովի գովազդի հնարավորություն համայնքի փոքր և միջին բիզնեսների համար, ինչը կնպաստի տնտեսական ակտիվության աճին:

3. Արտակարգ հաղորդագրությունների օպերատիվ տարածում
Օգտակար կլինի՝ անջատումներ, եղանակային վտանգներ, վթարներ կամ արագ արձագանք պահանջող այլ դեպքեր:

Քայլերի հաջորդականություն.

1. Բնակիչների հետ հանդիպում և քննարկում՝ տեղադրման, հեռարձակման բովանդակության և բնակչությանը առնչվող հարցերում սակագների քննարկման համար,

2. Տեղական բիզնեսների հետ հանդիպում և քննակրում՝ քարտեզագրելու համար հնարավոր շահառուներին և հետագա գովազդատուներին,

3. Ավագանու կողմից բովանդակության և սակագների հետ կապված որոշման կայացում,

4. Համապատասխան ծառայության ներդրման մեխանիզմերի մշակում՝ թե՛ օգտագործման, թե՛ կառավարման տեսանկյունից,

4.Համապատասխան մասնագետի/մասնագետների վարձում/ուսուցում/վերապատրաստում՝ տվյալ ծառայության մատուցման համար,

5. Բովանդակության կազմում՝ ելնելով տարեկան իրականացվող միջոցառումների օրակարգից, տեղադրվող գովազդների և հայտարարությունների քանակից (ճկուն կառավարում՝ կապված գովազդի քանակից): արտակարգ իրավիճակի դեպքում բովանդակության փոփոխության ճկունություն (ցանկալի է նաև ԱԻ տեսանյութերի տեղադրում՝ զուտ ուսուցման նպատակով):

6. Համայնքի երիտասարդների և թինեյջերների ներգրավում, հնարավորություն ՝ սեփական հետաքրքիր բովանդակություն և լսարան ստեղծելու համար:

7. Կատարված աշխատանքների լուսաբանում,

8. Բնակչության իրավունքների և պարտականությունների մասին ուսուցողական տեսանյութերի հրապարակում՝ մեծացնելով նրանց ներգրավվածությունը համայնքի կառավարմանը:

Արդյունքում մեծ տնտեսական, գովազդային հնարավորություն կլինի տեղական բիոզնեսի, անհատների համար: Մշակութային, իրավական, անվտանգային իրազեկվածության մեծ և լայն լսարանային հարթակ կստեղծվի: